

**5.6. Երկրաբանահետախուզական աշխատանքներ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության ամփոփ տվյալների, 1999թ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 274.7 մլն. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 352.5 մլն. դրամի դիմաց: Այդ աշխատանքների 36.9 %-ը կամ 101.3 մլն. դրամը կատարվել է պետական բյուջեից նախատեսված հատկացումների հաշվին (1998թ. 90.5 %-ի կամ 318.9 մլն. դրամի դիմաց), 63.1 %-ը կամ 173.4 մլն. դրամը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին (1998թ. 9.5 %-ի կամ 33.5 մլն. դրամի դիմաց): Երկրաբանահետախուզական աշխատանքների ինքնարժեքն առանց ավելացած արժեքի հարկի կազմել է 221.3 մլն. դրամ:

1999թ. կատարվել է 4572 մ մեխանիկական հորատում, որից 2450 մ-ը՝ սյունակային, 2122 մ-ը՝ ոչ սյունակային: Մեխանիկական հորատման 20.7 %-ը կատարվել է պետբյուջեի, 79.3 %-ը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին: Կատարվել է 18.4 մ հորիզոնական և 60.9 մ ուղղահայաց լեռնային ստորգետնյա փորվածքներ, բոլորն էլ՝ պետբյուջեի հաշվին: Լեռնային վերգետնյա փորվածքներից 3.9 հազ. խոր. մ-ը առուների, խրամատների փորվածքներն են և մաքրման աշխատանքները (83.8 %-ը՝ պետբյուջեի, 16.2 %-ը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին): Մինչև 5 մ խորության հետախուզահորերը զբաղեցրել են 181.5 գծ.մ (79.3 %-ը պետբյուջեի, 20.7 %-ը արտաբյուջետային միջոցների հաշվին):

Պետբյուջեի հաշվին 783.1 քառ. կմ-ի վրա կատարվել է երկրաբանական հանույթ, 18.5 քառ. կմ-ի վրա՝ երկրաֆիզիկական հանույթ էլեկտրահետախուզման մեթոդով, 330 քառ. կմ-ի վրա՝ հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական հանույթ, 72.5 քառ. կմ-ի վրա՝ երկրաքիմիական հանույթ: Տարածաշրջանային (ռեգիոնալ) աշխատանքների ծավալը կազմել է 14.7 մլն. դրամ, որից 7.5 մլն. դրամը՝ երկրաբանական, 4.5 մլն. դրամը՝ հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական, 2.7 մլն. դրամը՝ երկրաֆիզիկական բնույթի աշխատանքներ են:

Իրականացվել են 1.9 մլն. դրամի ժամանակավոր շինություններ, 7.9 մլն. դրամի տրանսպորտային /անձնակազմի և բեռների տեղափոխում/ ծախսեր, 4.5 մլն. դրամի լաբորատոր, 8.6 մլն. դրամի աշխատանոցային և 20.6 մլն. դրամի այլ բնույթի աշխատանքներ:

1999թ. ընթացքում ավարտվել է (վերջնական հորատվել է) 351 հորատանցք (1998թ. 93-ի դիմաց), որոնցից 326-ը՝ մինչև 25 մ, 21-ը՝ 25-100 մ և 4-ը՝ 101-200 մ խորությամբ: Ավարտված հորատանցքերի գումարային խորությունը կազմել է 4572 մ (1998թ. 4604.5 մ-ի դիմաց), իսկ միջին խորությունը՝ 13 մ, նախորդ տարվա 49.5 մ-ի դիմաց:

**Երկրաբանահետախուզական աշխատանքներն ըստ բնագավառների և աշխատափուլերի**

Բնագավառը	Փաստացի կատարված աշխատանքների ծավալը	ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝ ըստ փուլերի			
			որոնողական	որոնողագնահատողական	նախնական հետախուզական	մանրակրկիտ հետախուզական
Երկրաբանահետախուզական աշխատանքներ, ընդամենը	պետբյուջեի հաշվին արտաբյուջետային միջոցների հաշվին	101.3 173.4	61.9 26.9	10.1 9.7	20.9 -	8.4 136.8
այդ թվում՝ գումարավոր մետաղներ	պետբյուջեի հաշվին արտաբյուջետային միջոցների հաշվին	14.1 7.8	7.0 -	7.1 -	- -	- 7.8
ազնիվ մետաղներ	պետբյուջեի հաշվին արտաբյուջետային միջոցների հաշվին	37.1 -	7.8 -	- -	20.9 -	8.4 -

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Բնագավառը	Փաստացի կատարված աշխատանքների ծավալը	ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝ ըստ փուլերի			
			որոնողական	որոնողագնահատողական	նախնական հետախուզական	մանրակրկիտ հետախուզական
ոչ մետաղներ	պետբյուջեի հաշվին արտաբյուջետային միջոցների հաշվին	14.0 40.1	11.0 26.9	3.0 9.7	- -	- 3.5
տարածաշրջանային (ռեգիոնալ) երկրաբանական, երկրաֆիզիկա կան, հիդրոերկրաբանական աշխատանքներ	պետբյուջեի հաշվին արտաբյուջետային միջոցների հաշվին	36.1 -	36.1 -	- -	- -	- -
հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական աշխատանքներ	պետբյուջեի հաշվին արտաբյուջետային միջոցների հաշվին	- 125.5	- -	- -	- -	- 125.5